Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-736-01.12.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 89-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 30.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«30.1) սահմանում է դատարաններում էլեկտրոնային համակարգի վարման և դրանից օգտվելու, ծավալուն էլեկտրոնային ֆայլերը էլեկտրոնային եղանակով դատարան ներկայացնելու, ինչպես նաև այն էլեկտրոնային ֆայլերի, որոնք հնարավոր չէ ներկայացնել էլեկտրոնային համակարգի միջոցով, դատարան ներկայացնելու կարգը.»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող՝ Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 30.1-ին կետով սահմանված կարգը Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 89-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 30.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«30.1) սահմանում է դատարաններում էլեկտրոնային համակարգի վարման և դրանից օգտվելու, ծավալուն էլեկտրոնային ֆայլերը էլեկտրոնային եղանակով դատարան ներկայացնելու, ինչպես նաև այն էլեկտրոնային ֆայլերի, որոնք հնարավոր չէ ներկայացնել էլեկտրոնային համակարգի միջոցով, դատարան ներկայացնելու կարգը~~սահմանում է դատարաններում էլեկտրոնային համակարգի վարման և դրանից օգտվելու կարգը, այն էլեկտրոնային ֆայլերի ներկայացման կարգը, որոնք հնարավոր չէ դատարան ներկայացնել էլեկտրոնային համակարգի միջոցով, ծավալուն էլեկտրոնային ֆայլերի էլեկտրոնային եղանակով դատարան ներկայացնելու կարգը~~.»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն ~~օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է դատարաններում էլեկտրոնային համակարգի վարման և դրանից օգտվելու կարգը, ծավալուն էլեկտրոնային ֆայլերի, ինչպես նաև այն էլեկտրոնային ֆայլերի ներկայացման կարգը, որոնք հնարավոր չէ ներկայացնել էլեկտրոնային համակարգի միջոցով~~օրենքի 1-ին հոդվածով լրացվող՝ Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 30.1-ին կետով սահմանված կարգը Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԴԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-736-01.12.2023-ՊԻ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	**Կառավարություն**	**««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» (*Կ-736-01.12.2023-ՊԻ-011/1*) օրենքի նախագծի հոդված 1**	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով լրացվող Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 30.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «30.1) սահմանում է դատարաններում էլեկտրոնային համակարգի վարման և դրանից օգտվելու, ծավալուն էլեկտրոնային ֆայլերը էլեկտրոնային եղանակով դատարան ներկայացնելու, ինչպես նաև այն էլեկտրոնային ֆայլերի, որոնք հնարավոր չէ ներկայացնել էլեկտրոնային համակարգի միջոցով, դատարան ներկայացնելու կարգը.»: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որպեսզի տպավորություն չստեղծվի, թե գործ ունենք երեք տարբեր կարգերի հետ,	Ընդունվել է	Ընդունվել է

			քանի որ գործնականում նախատեսվում է մեկ կարգի մշակում և ընդունում:		
2.	**Կառավարություն**	**««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» (*Կ-736-01.12.2023-ՊԻ-011/1*) օրենքի նախագծի հոդված 2**	Առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող՝ Օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 30.1-ին կետով սահմանված կարգը Բարձրագույն դատական խորհուրդը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:»: Առաջարկը պայմանավորված է սույն ամփոփաթերթի 1-ին կետով առաջարկվող փոփոխությամբ:	Ընդունվել է	Ընդունվել է